Մշակութային ժողովրդավարության 60 տարի

Մշակույթ. Ժողովրդավարության սիրուն ու հոգին

“Մենք հավատում ենք բազմազանությանը՝ որպես ժողովրդավարությանը նպաստող ուժի և քաջալերում ենք երկխոսությունը որպես խաղաղության կերտման միջոց”

Եվրոպայի խորհուրդը Եվրոպայում մարդու իրավունքների առաջատար կազմակերպությունն է: Այն ունի 47 անդամ երկիր, որոնցից 28-ը Եվրոպական միության անդամ են:

Մշակույթը հիմնական դեր է խաղում այլ մարդկանց հասկանալու և բազմազանությունը հարգելու գործում: Այդ է պատճառը, որ Եվրոպայի խորհուրդը 1954թ. ընդունեց Եվրոպական մշակութային կոնվենցիան, որը համագործակցություն է կազմակերպում ամբողջ Եվրոպայում մշակույթի, կրթության, երիտասարդության, սպորտի, լեզուների և ընդհանուր արժեքների փոխանցման բնագավառներում:

Այս ցուցահանդեսի նպատակն է ձեզ պատկերացում տալ, թե ինչ է անում Եվրոպայի խորհուրդը այս բնագավառներում և ինչպես է նա օգնում ամրապնդելու ժողովրդավարությունն ու մարդու իրավունքները Եվրոպայով մեկ և նրանից դուրս:

www.coe.int

Եվրոպայի խորհուրդ՝ մարդու իրավունքների, ժողովրդավարության և օրենքի գերակայության պահապան

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

Մշակույթ. Ժողովրդավարության սիրտն ու հոգին



Učimo zajedno

“Ես լավացնում եմ համացանցը և մտածում նախքան նյութը տեղադրելը”

Արմանդ Սոնեգ, ուսանող, Ալբանիա

Խարտիա հանուն ժողովրդավար քաղաքացիության կրթության և մարդու իրավունքների կրթության մասին
Քանի որ ժողովրդավարությունը և մարդու իրավունքները սկսվում են մեզանից, խարտիան օգնում է մեզ այս արժեքների կիրառման ուղիներ գտնել և հասարակության մեջ արդյունավետ ու դրական դեր խաղալ: Եվրոպայի խորհրդի բոլոր 47 անդամ երկրները ստորագրել են խարտիան՝ պարտավորվելով պայքարել կրթության մեջ բռնության և խտրականության բոլոր ձևերի, հատկապես ծաղրանքի դեմ:

Շարժում ընդդեմ ատելության արտահայտման
Այս նախագիծը օգնում է երիտասարդներին և երիտասարդական կազմակերպություններին պայքարել առցանց ռասիզմի ու խտրականության դեմ: Համացանցը երիտասարդների սոցիալական աշխարհի մասն է, և նրանք պետք է լինեն դրա պահապանը: Շարժմանը մասնակցում են Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ երկրները:

Պեստալոցցի ծրագիրը
Ծրագիրը վերապատրաստում է տարեկան 1000 ուսուցիչ Եվրոպայով մեկ, տրամադրում է վերապատրաստման ավելի քան 100 առցանց ռեսուրս և ապահովում է փորձի փոխանակման առցանց հարթակ: Աշակերտակենտրոն և փոխգործուն ուսուցման մեթոդների միջոցով փոխանցում է ժողովրդավարական հասարակության մեջ պահանջվող վերաբերմունքները, հմտություններն ու գիտելիքները: Վերապատրաստելով կրթության ոլորտի մասնագետներին՝ այն ազդում է սովորողների կրթության վրա:

Լրացուցիչ տեղեկատվության համար տես u

www.coe.int

Եվրոպայի խորհուրդ՝ մարդու իրավունքների, ժողովրդավարության և օրենքի գերակայության պահապան

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Մշակույթ. Ժողովրդավարության սիրուն ու հոգին

Հաղորդակցվել այլոց հետ

“Համարում են, որ ինքնագնահատումը սովորողների վրա խիստ ոգեշնչող ազդեցություն ունի”

Սերխիո Գարսիա, լեզվի ուսուցիչ, Իսպանիա

Լեզվի ուսուցում

Լեզվի ուսուցումը բարելավելու նպատակով Եվրոպայի խորհուրդը մշակում է ծրագրեր և գործիքներ: Նրա ձեռքբերումներից են՝ գրավոր և բանավոր լեզվական կարողությունների նկարագրման միջազգային ճանաչում ստացած «A1-C2» համակարգը և չափահաս ներգաղթյալների ինտեգրման համար մշակված հատուկ գործիքները:

Ժամանակակից լեզուների եվրոպական կենտրոնը Գրացում

Գրացի կենտրոնը մի խումբ փորձագետների հետ համատեղ նորարարական լուծումներ է մշակում դպրոցներում լեզվի ուսուցման համար: Այն տրամադրում է միջազգային սեմինարներ և դասընթացներ՝ ուսուցիչներին վերապատրաստողների և կրթության ոլորտի մասնագետների համար ամբողջ Եվրոպայում:

Լեզուների եվրոպական օր

Ամեն տարվա սեպտեմբերի 26-ին Եվրոպայով մեկ տեղի են ունենում միջոցառումներ՝ միջմշակութային փոխըմբռնումը զարգացնելու և մեր մայրցամաքում խոսվող 225 տեղաբնիկ լեզուների գործածությունը խթանելու համար:

Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիա

Խարտիան խթանում և պաշտպանում է երկրի տարածքում ավանդաբար գործածվող տարածաշրջանային և փոքրամասնությունների լեզուները:
Նա հնարավորություն է տալիս խոսողներին գործածել դրանք անձնական և հասարակական կյանքում, մասնավորապես կրթության և լրատվամիջոցների մեջ, ինչպես նաև վարչական մարմինների ու դատարանների հետ հաղորդակցվելիս: Խարտիայի պահպանումը վերահսկվում է փորձագետների կոմիտեի կողմից:



Լրացուցիչ տեղեկատվության համար տես u

www.coe.int

Եվրոպայի խորհուրդ՝ մարդու իրավունքների, ժողովրդավարության և օրենքի գերակայության պահապան

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Մշակույթ. Ժողովրդավարության միրոն ու հոգին

Որտեղ ենք մենք ապրում

“Ինձ իսկապես հաճելի է նոր մարդկանց հետ ընկերանալ, ովքեր այլ կենցաղ ունեն”

Յոհան Շմիտտ, աշակերտ, Գերմանիա

Միջմշակութային քաղաքներ

Այս ցանցն օգնում է նախաձեռնությանը միացած տեղական իշխանություններին կառավարել մշակութային բազմազանությունը: Համախմբվածություն խթանելու նպատակով՝ այն խրախուսում է հասարակության մեջ տարբեր խմբերի միախառնումն ու շփումը, ինչպես նաև մշակում է գործիքներ մշակութային բախումներին դիմագրավելու համար:

Լանդշաֆտի կոնվենցիան

Թե՛ քաղաքում, թե՛ գյուղում լանդշաֆտը մեր կենցաղն է, բնական և մշակութային ժառանգությունը՝ լինի այն սովորական, թե արտառոց: Կոնվենցիան խթանում է բարձրակարգ ճարտարապետական և քաղաքաշինական ծրագրերը և քաղաքացիներին ու ընկերություններին հնարավորություն է տալիս ակտիվ դեր խաղալ իրենց շրջապատի պաշտպանության և կառավարման մեջ: Այն վավերացվել է Եվրոպայի խորհրդի 38 անդամ երկրների կողմից:

Ժողովրդավարական կառավարում

Եվրոպայի խորհուրդն օգնում է տեղական և տարածաշրջանային իշխանություններին դառնալու առավել արդյունավետ, հաշվետու և թափանցիկ: Օրինակ՝ Տեղական կառավարման բարեփոխման փորձագիտական կենտրոնը գործ ունի հանրային վարվեցակարգի, ղեկավարման զարգացման, տեղական ֆինանսավորման և միջքաղաքապետարանական համագործակցության հետ:

Լրացուցիչ տեղեկատվության համար տես u

www.coe.int

Եվրոպայի խորհուրդ՝ մարդու իրավունքների, ժողովրդավարության և օրենքի գերակայության պահապան

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

Մշակույթ. Ժողովրդավարության սիրտն ու հոգին

Կիսել մշակույթն իր ողջ բազմազանությամբ

“Եվրոպայի խորհրդի 30-րդ Արվեստի ցուցահանդեսը շատ առանձնահատուկ է այն իմաստով, որ նման է հիթ շքերթի”

Հիլկկա Հիիռոպ, Կումուի թանգարանի գլխավոր պահապան, Տալլին, Էստոնիա

Միջմշակութային երկխոսություն

2008թ. «Միջմշակութային երկխոսության վերաբերյալ Սպիտակ գրքի» ընդունումից հետո Եվրոպայի խորհուրդը մի շարք ծրագրեր է նախաձեռնել ուսուցիչների վերապատրաստման, փոքրամասնությունների պաշտպանության և սոցիալական համախմբման վերաբերյալ՝ ներառյալ իր ամենամյա երկխոսությունը կրոնական համայնքների և ոչ կրոնական համոզմունքների տեր անձանց հետ: «Միջմշակութային շփումների ինքնակենսագրություն» գործիքը խրախուսում է անհատներին սովորել անձնական փորձից, թե՛ անմիջական շփումների միջոցով, և թե՛ տեսողական լրատվամիջոցներով:

Մշակութային ուղիներ

Այն պահից ի վեր, երբ 1987թ. մեկնարկել է «Դեպի Սանտյագո դե Կոմպոստելա ուխտագնացությունը», Եվրոպայի խորհուրդը խրախուսել է սահմանային փոխանակումները և միջմշակութային երկխոսությունը իր 26 Մշակութային ուղիների միջոցով: Թեմատիկ ուղիները, որոնք միացնում են տարբեր մշակույթների ու ինքնության վայրերն ու մարդկանց, նպաստում են նվազ հայտնի տարածաշրջանների կայուն զարգացմանը: Դրանք են՝ «Փյունիկեցիները», «Հրեական ժառանգությունը», «Խեցեգործությունը», «Մոցարտը», «Հանզան»:

Արվեստի ցուցահանդեսներ

Արվեստի ցուցահանդեսները նախաձեռնվել են 1954թ.՝ վերստեղծելու համար Եվրոպայի մշակութային ինքնությունը: Դրանք լուսաբանում են Եվրոպական արվեստի պատմությունը նշանավորող հիմական շարժումները, դեմքերին և իրադարձությունները: 30-րդ ցուցահանդեսը՝ «Ազատության տենչ. արվեստը Եվրոպայում 1945թ.-ից հետո», ներկայացնում է ազատությանը, մարդու իրավունքներին և ժողովրդավարությանը հետամուտ նկարիչներին (Բեռլին, Միլան, Տալլին և Կրակով)

Լրացուցիչ տեղեկություններ համար տես u

www.coe.int

Եվրոպայի խորհուրդ՝ մարդու իրավունքների, ժողովրդավարության և օրենքի գերակայության պահապան

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Մշակույթ. Ժողովրդավարության սիրտն ու հոգին

Հարաբերվել ժամանցի միջոցով

“Արդյունքների կանխորոշման դեմ պայքարում Եվրոպայի խորհուրդն այսօր ստանձնել է քաղաքական առաջնորդի դերը: Հույսով եմ, որ ԵՄ հաստատությունները կհետևեն նրան”

Միշել Պլատինի, ՌԻԵՖԱ-ի նախագահ, Ֆրանսիա

Սպորտ

Եվրոպայի խորհուրդը նպաստում է բազմազանությանը սպորտի մեջ և նրա միջոցով՝ խթանելու համար սոցիալական ինտեգրումը, հանդուրժողականությունը և ըմբռնումը: Այն կենտրոնանում է կանանց, ազգային փոքրամասնությունների և հաշմանդամություն ունեցող մարդկանց սպորտի մեջ ներգրավման և մարդատյացության դեմ պայքարի վրա: Կազմակերպությունը պաշտպանում է ազնիվ խաղը և աշխատում է սպորտի կառավարումն ավելի թափանցիկ դարձնել՝ պայքարելով խթանիչների, հանդիսատեսների շրջանում բռնության և արդյունքների կանխորոշման դեմ:

Յուրիմաժ

Յուրիմաժն օժանդակում է եվրոպական կինոյին՝ աջակցելով կինեմատոգրաֆիական աշխատանքների համատեղ արտադրությանը, տարածմանն ու ցուցադրմանը: Հիմնադրվելով 1988թ.՝ հիմնադրամը շնորհել է ավելի քան 474 միլիոն եվրո 1500-ից ավելի եվրոպական ֆիլմերի: Յուրիմաժից աջակցություն ստացած 60-ից ավելի ֆիլմեր արժանացել են հեղինակավոր մրցանակների՝ Ցեզար, Ոսկե արմավենի, Օսկար, Ոսկե առյուծ:

Եվրոպական ժառանգության օրեր

Ամեն սեպտեմբեր 50 երկիր մասնակցում են Եվրոպական ժառանգության օրերին՝ հասարակության առջև բացելով պատմական շենքերը, որոնք, որպես կանոն, փակ են: Մշակութային միջոցառումների շրջանակներում շեշտը դրվում է տեղական հմտությունների ու ավանդույթների, ճարտարապետության ու արվեստի գործերի վրա՝ նպատակ ունենալով միավորել քաղաքացիներին՝ անկախ նրանց մշակութային և լեզվական տարբերություններից: Եվրոպական միությունը միանում է Եվրոպայի խորհրդին՝ նշելու այդ օրերը:

Լրացուցիչ տեղեկատվության համար տես u

www.coe.int

Եվրոպայի խորհուրդ՝ մարդու իրավունքների, ժողովրդավարության և օրենքի գերակայության պահապան

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L’EUROPE

Մշակույթ. Ժողովրդավարության սիրուն ու հոգին

Քաղաքացիություն կերտել երիտասարդների հետ

“Այս նախագիծն ինձ հնարավորություն է տալիս դառնալ երիտասարդության առաջնորդ, ով ուզում է երիտասարդներին ներգրավել խաղաղ երկխոսության մեջ”

Մեդա Գուտեզ, Երիտասարդության հարցերով խաղաղության դեսպան, Իսպանիա

Կերտել խաղաղություն

Երիտասարդության հարցերով խաղաղության դեսպանները միջոցառումներ են կազմակերպում՝ խթանելու մարդու իրավունքներն ու ժողովրդավարությունը բռնության և հակամարտության հետևանքով տարանջատված համայնքներում: Ամենամյա «Երիտասարդական խաղաղության ճամբարները» համախմբում են հակամարտային տարածաշրջանների երիտասարդության առաջնորդներին: Շատերի համար սա առաջին առիթն է՝ խոսելու «մյուս կողմի» երիտասարդների հետ:

Դասընթացներ երիտասարդների համար

Ամեն տարի մոտ 5000 երիտասարդության առաջնորդներ դասընթացներ են անցնում Եվրոպայի խորհրդի Բուդապեշտի և Ստրասբուրգի երիտասարդական կենտրոններում: Դասընթացները մեծ ազդեցություն ունեն, քանի որ երիտասադության առաջնորդները իրենց սովորածը փոխանցում են իրենց միությունների անդամներին: Ավելի քան 15000 երիտասարդներ օգտվում են Եվրոպական երիտասարդական հիմնադրամի տրամադրած ծրագրերից՝ խթանելու համար ըմբռնում, հանդուրժողականություն և համերաշխություն:

Երիտասարդների մասնակցությունը

Եվրոպայի խորհուրդն աշխարհում միակ միջկառավարական կազմակերպությունն է, որը կառավարության ներկայացուցիչների կողքին իր համակառավարման համակարգի միջոցով հավասար ձայնի իրավունք է տալիս երիտասարդական կազմակերպություններին՝ երիտասարդներին վերաբերող քաղաքականության, ծրագրերի և առաջնահերթ խնդիրների շուրջ որոշումների կայացման գործընթացում:

Էլեկտրոնային տեղեկատվության համար տես u

www.coe.int

Եվրոպայի խորհուրդ՝ մարդու իրավունքների, ժողովրդավարության և օրենքի գերակայության պահապան

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Մշակույթ. Ժողովրդավարության սիրտն ու հոգին

Կիսել արժեքները պատմության և ժառանգության միջոցով

“Եվրոպայի խորհրդի և Յադ Վաշեմի միջև կնքված համաձայնագիրը վկայում է Եվրոպայում Հոլոքոստի վերաբերյալ կրթությունը խորացնելու և զարգացնելու պատրաստակամության մասին”

Ավիսեր Շալեվ, Յադ Վաշեմի նախագահ, Երուսաղեմ (2012)

Պատմության ուսուցումը

Ծրագրերը վերաբերում են Եվրոպայում պատմության դասագրքերի վերանայմանն ու ուսումնական ծրագրերի բարեփոխմանը, ինչպես նաև ուսուցիչների համար ուսումնական նյութերի պատրաստմանը: Նպատակն է շեշտել միայն քաղաքական իրադարձությունների, պատերազմների և ազգային պատմությունների վրա կենտրոնանալու վտանգը, որով մյուս ազգերը հաճախ դիտվում են որպես «թշնամի»:

Մարդկության դեմ հանցագործությունները

Եվրոպայի խորհուրդն օգնում է նոր սերունդներին հասկանալ անցյալը, զարգացնել բարոյական խիղճ և պատասխանատվություն ստանձնել որպես Եվրոպայի քաղաքացիներ մարդկության դեմ հանցագործությունները կանխելու համար: Ուսուցիչների համաեվրոպական սեմինարները Հոլոքոստից վերապրածների հետ նյութ են տրամադրում պատմության, արվեստի և երաժշտության դասերի համար:

Ժառանգորդության քաղաքականությունը

Եվրոպայի խորհուրդը աշխատում է ամբողջ Եվրոպայում օգնել պետություններին հիմնելու համակարգեր պաշտպանելու, կարգավորելու և զարգացնելու համար իրենց մշակութային հարստությունը: Չորս հիմնական կոնվենցիաներ արտացոլում են Եվրոպայի խորհրդի սկզբունքներն այս բնագավառում: Դրանք խթանում են ժողովրդավարական մասնակցությունը, բազմազանության նկատմամբ հարգանքը և սոցիալ-տնտեսական զարգացումը:

Լրացուցիչ տեղեկատվության համար տես u

www.coe.int

Եվրոպայի խորհուրդ՝ մարդու իրավունքների, ժողովրդավարության և օրենքի գերակայության պահապան

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L’EUROPE